# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ. ապրիլի 19 N 98- Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՀՆԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վարչության պետի 2017 թվականի ապրիլի 18-ի N 21/21.4/9383-17 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Հնաբերդ համայնքի բնակիչ Ս. Եղիազարյանի Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Հնաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ սույն թվականի ապրիլի 19-ից 21-ը ներառյալ դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ իրականացնել ուսումնասիրություններ և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Գ. ԳՅՈՌԱԼՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2017թ.
ապրիլի 19-ի N 98 -Ա կարգադրության

Կազմ

Ուսումնասիրություն իրականացնող հանձնաժողովի

Մ. Եդիգարյան- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ /հանձնաժողովի նախագահ/

Ռ. Նալբանդյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության , մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Ս. Սարգսյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Ե. Մինասյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ